

**ՔՀԿ-ների համար Քրաուդֆանդինգի թեմայով երկօրյա դասընթաց**

Դասընթացի օրակարգ

Հունիս 19-20, 2018

**Նպատակը՝** Ներկայացնել քրաուդֆանդինգը որպես ֆինանսական միջոցների հայթայթման տեսակ: Զարգացնել ՀԿ-ների հմտություններն ու կարողությունները քրաուդֆանդինգի բնագավառում: Կներկայացվեն հատուկ փորձված օրինակներ և հաջողության պատմություններ քրաուդֆանդինգի տարբեր փուլերի մասին, ինչպես նաև կկազմակերպվի թիմային աշխատանք, որի արդյունքում յուրաքանչյուր թիմ դասընթացի վերջում կկարողանա կազմակերպել իր ծրագիրը քրաուդֆանդինգի միջոցով:

**Սկզբունքը՝** Որպեսզի կազմակերպությունները կարողանան իրականացնել ճիշտ և գրագետ ֆոնդհայթայթում, կարևոր է մանրամասն տեղեկացված լինել շուկայում գործող իրավիճակի և մրցակցության մասին, ինչպես նաև պատրաստված և իրագրելի լինել ֆոնդհայթայթման կարևոր փուլերի մասին:

**Մեթոդը՝** Դասընթացի ընթացքում կներկայացվեն հիմնական հասկացությունները, կիրականացվեն հիմնախնդիրներին առնչվող դեպքերի քննարկումներ, աշխատանք խմբերում ու սեփական օրինակների մասին քննարկումներ: Դասընթացը կանցկացվի մասնակցային և կխրախուսվի բոլորի ներգրավվածությունը:

**Թիրախ լսարան՝** Հայաստանյան 25 ՔՀԿ-ների ղեկավարներ և ֆոնդահայթայթման պատասխանատուներ:

**Առաջին օր, երեքշաբթի 19 հունիսի**

Ժամ	Թեմա
10:00– 10:30	Մասնակիցների գրանցում և սուրճ
10:30- 11:30	Բացում Ներկայացում Դասընթացի նպատակը և օրակարգը, դասընթացավարներ Մասնակիցներ ՔՀ Կամուրջ ծրագրի նկարագիրը, ՔՀԿ զարգացման կարիքները Հայաստանում
11:30-12:30	Ի՞նչ է Քրաուդֆանդինգը
12:30–13: 15	Գաղափարների մակաբերում և խմբերի ձևավորում
13:15– 14:00	Ճաշ
14:00– 15:00	Հաղորդակցության կարևորությունը Քրաուդֆանդինգի պլանավորման գործընթացում
15:00– 16:00	Քրաուդֆանդինգի պլանավորում – Փուլ Առաջին
16:00 -16: 15	Սուրճի ընդմիջում
16:15– 17:45	Սկսում ենք պատրաստվել մեր ծրագրի ֆոնդհայթայթման համար
17:45-18:00	Առաջին օրվա փակում

Օր երկրորդ, չորեքշաբթի 20 հունիսի

Ժամ	Թեմա
9:30 – 10:00	Առաջին օրվա ռեֆլեքսիա
10:00 – 11:00	Ֆինանսական և բյուջեի կառավարման սկզբունքները, ծրագրի բյուջեի կազմում
11:00 -13:00	Սոցիալական/թվային մեդիայում ակտիվ քրաուդֆանդինգ - մարքեթինգ
13:00-13:45	Ի՞նչ պետք է անել երբ սկսվում է արշավը – Փուլ երկրորդ Աշխատանք խմբերում
13:45 – 14:30	Ճաշ
14:30-15:15	Փուլ երրորդ – Ի՞նչ ենք անում ֆոնդայթայթումը հաջողությամբ իրականացնելուց հետո
15:15– 16:15	Խմբերի ներկայացումներ
16:15– 16:30	Սուրճի ընդմիջում
16:30-17:30	Խմբերի ներկայացումների շարունակություն
17:30 -18:00	Ընտրող հանձնաժողովի կողմից ծրագրերի գնահատում և սիմվոլիկ մրցանակի հանձնում հաղթողին
18:00-18:30	Դասընթացի փակում, սերտիֆիկատների հանձնում

**ՔՀ Կամուրջ ծրագրի մասին**

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) հետ իրականացնում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ՔՀ Կամուրջ ծրագիրը: Եռամյա այս ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերին: Ծրագիրն ուղղված է Հայաստանում գրանցված և գործող հասարակական կազմակերպություններին, հայաստանյան համալսարաններին, ինչպես նաև սփյուռքի երիտասարդ մասնագետներին, ովքեր իրենց գիտելիքներով և փորձառությամբ կցանկանան նպաստել հայաստանյան կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

Ծրագրի նպատակն է՝ ամրապնդել հայաստանյան քաղաքացիական հասարակության կարողությունները՝ նպաստելու Հայաստանում որոշումների կայացման գործընթացներին: Այս նպատակին հասնելու համար, ծրագիրը նախատեսում է՝

- Կատարել մինչև 200 ՔՀԿ-ների մասնագիտական ոլորտներին առնչվող (ուղղահայաց) կարիքների գնահատում՝ քարտեզագրելով ՔՀԿ-ների կարողությունները և կարիքները:
- Առաջարկել մինչև 80 ՔՀԿ-ներից 200 անձանց անհատական վերապատրաստման դասընթացներ:
- Ապահովել մասնագիտական խորհրդատվություն մինչև 80 ՔՀԿ-ների՝ անվճար հիմունքներով հրավիրելով մասնագետներ սփյուռքից և Հայաստանից:
- Ինստիտուցիոնալացնել կարողությունների հզորացումը՝ գործարկելով ՀԿ կառավարման ակադեմիական հավաստագրային ծրագիր:
- Տրամադրել դրամաշնորհներ՝ ՔՀԿ-ների փոքր նախագծերը իրականացնելու նպատակով:
- Together4armenia առցանց հարթակի զարգացում:

Մանրամասն ծրագրի մասին՝ [այստեղ](http://www.agbu.am/am/bridge-for-csos/3024-bridge-for-csos-announcement-for-registration): Ծրագրի ՔՀԿ-ների ցանցում գրանցվելու համար ահա հղումները՝ [www.agbu.am/am/bridge-for-csos/3024-bridge-for-csos-announcement-for-registration](http://www.agbu.am/am/bridge-for-csos/3024-bridge-for-csos-announcement-for-registration).